Հովհաննես Թումանյան

Որբը

(Հայ ժողովրդական ավանդություն)

Սրհա՛կ… Սրհա՛կ… գիշերն ի բուն
Կանչում է Որբն աղեկրտուր,
Աշխարհքն այնինչ մրտած խոր քուն,
Ինքը մենակ ու շուրջը լուռ:

Աղջիկ էր նա մի ժամանակ,
Էնպես աշխո՛ւյժ ու գեղանի.
Թուրքը տեսավ, խելքը գընաց,
Ուզեց զոռով հարեմ տանի:

Մի՛ վախենար, սիրուն քուրի՛կ,

Ես չեմ թողնի քեզ տանելու.
Քեզ կրթոցնեմ, ինչպես մրրրիկ,
Էս աշխարհքից հեռո՛ւ, հեռո՛ւ…

Էսպես ասավ քաջ Սրհակը,
Քրրոջն առավ փախա՛վ, գընաց,

Թողած իրենց հոր աշխարհքը,
Թուրքի դաժան լուծը թողած:

Տե՛ս, էն ձյունոտ, բարձրը սարեր,
Որ ձրգվում են հեռվում ահա.
Էն սարերն էլ անցնենք թե չէ՝

Դենը, քուրի՛կ, էլ թուրք չրկա…

Հենց էս խոսքում՝ թուրքը հասավ,
Սև ձին քրշած՝ սարի տակից.
Իմն է աղջիկն, իմն է, ասավ,
Ո՞ւր եք փախչում դուք իմ ճանկից…

Մի՛ վախենար, սիրուն քուրի՛կ,
Կանգնած եմ ես չար թուրքի դեմ.
Փախի՛ր, գընա՛… ինչպես մրրրիկ՝
Ես էլ կրգամ քեզ կրհասնեմ…

Ու ետ դարձավ քաջ պատանին,

Զենքի շաչյուն, զարկ ու աղմուկ.
Զարկ են տալիս, զարկ են առնում
Հայի անահ կրտրիճն ու թուրք…

Աղջիկն արագ վազ է տալի,
Շունչը հատած փախչո՛ւմ, փախչո՛ւմ.

Մին էլ նայեց՝ թուրքն է գալի,
Փընչում է ձին, զենքը շաչում…

Ա՛խ, ի՛նչ կրլնի թոչուն դառնամ…

Կանչեց ահից խեղճը հանկարծ,
Ու, բաց էին դրռներն երկնից,

Լըսեց նրրա ձենը աստված:

Դարձավ թրռչուն մի թևավոր,
Երկինքն ելավ, թրռա՛վ, պըրծա՛վ.
Մընա՛ց, մընա՛ց, մինչև էսօր
Քաջ ախպերը ետ չրդարձավ:

Էն օրվանից թրռչուն քույրը
Ցերեկն ահով կուչ է գալի,
Հենց հասնում է մութ գիշերը՝
Սրհա՛կ… Սրհա՛կ… ձեն է տալի:

Ձեն է տալի գիշերն ի բուն

Կանչում տրխո՛ւր, աղեկրտո՛ւր,
Աշխարհքն այնինչ մրտած խոր քուն,
Ինքը մենակ ու շուրջը լուռ:

1899